



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 21 ՄԱՐՏ 1887

ԹԻԻ 3865

ՄԱՐՏԱՆԻԱՆ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրները դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալամիւս, Նորատուփեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Name/Title and Address/Details. Includes entries for U. U., ՄԵԼԱՆԻԱ, Ա. ՍՐՓԻԱՐԵԱՆ, Ա. Գ. Փ., Ռ. Հ., Պ. Տ., ՊԼԱՏՈՆ ԶՈՒԲՕՎ, and Հ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 20 ՄԱՐՏ

ԱԶԳԱՅԻՆ

ԿԵՂԾ ԿՐՕՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Ուսումնական Խորհուրդը մի քանի ուսուցիչներ անուանեց «պատուակալ անդամ» — տիտղոս մը որոյ ո՛չ նշանակութիւնն եւ ո՛չ կարեւորութիւնը կալուելի է զիւրութեամբ, ըմբռնել — եւ այլոց չնորհեց վկայագիր առաջին կարգի ուսուցչի, թէպէտեւ զգալի պէտք մը չկար, եւ ոմանց երկրորդ եւ երրորդ կարգի: Սոյն կարգադրութիւններ պատճառեցին բազմաթիւ դժգոհութիւններ, եւ բողոքներ սկսան լըսուել այդ բնական էր, բայց դժբաղդաբար այդ բողոքներ ուշադրութիւն դրաւեցին, վասն զի իրաւունքը բողոքարկուներուն էր:

Վարչութեան զանազան ճիւղերը բաւական ժամանակէ ի վեր սկսած են անդադար սխալ քայլեր առնուլ եւ վերադարձ ազգային խիղճն: Եթէ բազմանան այդ սխալներն, այն ատեն ազգային իշխանութեան հիմունք կը խալտին: Ամէն իշխանութիւնը, նոյն իսկ

նիւթական ոյժի վրայ կռթնածներ, կը գիմեն իրենց կորստեան վերադարձը շարունակ ժողովուրդին զգացումներն, եւ իրենց գործող գրգռելով անիրաւութեան կնիքն: անարդար իշխանութիւն մը ուշ կամ կանոնաւոր պիտի քանդուի: Բայց երբ իշխանութիւն մը զուտ բարոյական գործութեան մը կռթնած է, նորա կործանումն անխնայ է եւ յոյժ մօտալուտ երբ անիրաւութիւններն անիրաւութեանց վրայ բարդելով, ընդհանուր դայրոյթ եւ զղուանք կը պատճառէ: Ո՛չ ոք այլ եւս պարտականութիւն մը կ'զգայ ինքնաբերաբար յարգել այդ իշխանութիւն: Այդ պատճառաւ ազգային պաշտօնական մարմնոց ամէն մէկ սխալը պէտք է խորին ցաւ պատճառէ ամէն անոնց ոյք փափաքող են ազգային իշխանութեանց կանգուն մնալուն եւ յարգելի լինելուն:

Սակայն անիրաւութիւն մը որքան կը քնատէ իշխանութեան մը, քան զայն աւելի վնասակար է ծիծաղելի լինելը:

Մեր Ուսումնական Խորհուրդն իւր վերջին որոշումներով ո՛չ միայն անիրաւ եղաւ այլ եւ ծաղրելի, եւ այս մասին պէտք է ըսել թէ մեղապարտն ինք չէ միայն, այլ նաեւ նախորդ կրօն. ժողովն որոյ կեղծաւորական ոգին կը տիրէ նաեւ արդի Ուսումնական Խորհրդոյ վրայ:

Ո՛չ պատուակալ անդամոց, եւ ո՛չ անաշխատարգ ուսուցիչներու ցանկին մէջ կը տեղանք մի քանի անուններ, ոյք այնքան մեծ ծառայութիւն մատուցած են ազգային գրականութեան, ազգային մանկավարժութեան եւ ազգային դաստիարակութեան: Ի՞նչ է այս անբարոյական պատճառն: — Վասն զի այդ հայ ուսուցիչներ կրօնական տարբեր դաւանանք ունին: Ազգային Ուսումնական Խորհուրդն, աւանդապահ ազգային ոգւոյն, կ'երկնչի որ այդպիսի անձանց հետ հաղորդակցութիւն ունենալով հայ աշակերտը կը սառնի իրենց ազգային զգացումներէն: — Տրամաբանութիւն մը զոր քսան տարի առաջ ո՛ր եւ է հայ պիտի ամաչէր ընելու:

Եթէ Պէշիկթաշեան ողջ լինէր, Ուսումնական Խորհուրդն զնա հայութեան համար վտանգաւոր ուսուցիչ մը պիտի համարէր: Ստոյգ է որ Պէշիկթաշեան իւր ողբերգութիւններով ամբողջ սերունդ մը ազգութեան ոգւով կրթեց. ստոյգ է որ Պէշիկթաշեան նի երգերն մինչեւ ցայսօր ամէն հայուն ոգիներն ի թունտ կը հանեն եւ եղբայրութեան կապերը կ'ամրապնդեն. ստոյգ է որ հայերն իբր ուխտատեղի մը երկրպագանելու կ'երթան Պէշիկթաշեան ամէն տուն, ամէն դպրոց ազատ մտք ունէր եւ հարկաւոր աշակերտներ ու աշակերտուհիներ ազգային ոգւով կրթեց. եւ սակայն ըստ մեր Ուսումնական Խորհուրդոյ Պէշիկթաշեան մէծ մեղքն ունէր:

Եւ միւսներն: Ահա՛ Մատթիւս Գարագաշեան՝ որ աւելի մի քառորդ դար է կը տքնի ազգային գրականութեան եւ դաստիարակութեան համար: Բազմաձմեւտ անձ, իւր դասագրքերովը կերպարանավորեց ազգային կրթութեան մէծ մասերն: Իւր հեղինակութիւններն ամէնախորին ուշադրութիւն գրաւած են ամէնուրեք: Իւր աշակերտները կը համբուլին հարկերներով ոյք ամէնքն ալ զնա կը սիրեն, կը յարգեն, եւ սակայն այդ անձն արժանի չէ հայութեան վստահութիւնը դրաւելու, վասն զի իւր կրօնական դաւանանքը տարբեր է հայոց մեծամասնութեան դաւանանքէն:

Ահա՛ Թերզեան զոր կը պաշտեն իւր աշակերտներ, զոր գգուանօք կը սիրէ ամբողջ հայութիւնն: Սանդուխտի, Սըշակի եւ բազմաթիւ ազգային ողբերգութեանց հեղինակն, հայրենասէր, փառիկալեղու, գորովալիւ բանաստեղծը պէտք է անբողոքի հայ վարժարաններէն: Մինչ անդին ո՛ր եւ է տեղեւտ արարած մը կարող պիտի լինի չնորհիւ իւր դաւանանքին — զոր եւ ո՛չ իսկ գիտէ թէ ի՞նչ է — մասնակցիլ ապագայ սերնդեան դաստիարակութեան գործին:

Ահա՛ Միհրան Յովհաննէսեան՝ խղճի մոռ. աշխատող եւ յոյժ կարող դասատու, մասնակից հայ երիտասարդութեան ամէն լաւ գործող, յարգելի եւ սիրելի եղած ամէնուն, զոր պարզապէս կը վաճառեն հայ դպրոցներէն: Յանցա՞նքը: Վասն զի ուրիշ կրօնք ունի:

Օրինակները չենք բազմապատկեր եւ ոչ իսկ անոնց վրայ երկար խորհրդածութեանց հարկը կը տեսնենք, իրողութիւնն այնքան ծանր կերպով կը մերկացնէ մեր պաշտօնական մարմնոց որոշումներուն անտեղի եւ անիրաւ լինելն:

օրէնք է, ինչ փոթ թէ գրուած չէ. բոլորքեալ օրէնք մեռեալ տառ կը մնայ, մինչ այն անգիր օրէնքն ընդհանուր կը գործադրուի՝ անխափան անդիմադրելի։ Վարչութիւնը այսպէս պարտէին վարուիլ, այստարաստելով լաւ օրինաց թագաւորութիւնն քան հաստատելով անյարմար օրէնքներ։ Նուազ պիտի յուզուէին, նուազ պիտի յոգնէին. պիտի հրաժարէին, երբէք չը պիտի անխնայ չը արտադրուէր մը, քարոզիչ մը, որ կը սիրէ ժողովուրդն, որ կը յարգէ ժողովրդեան զգացումներն, ամբողջ վարչութեան մը դէմ կը մարտնչի եւ կը յաղթանակէ։ Թող վարչութիւնը զգուշանան ժողովուրդն ու ժողովրդական մարդիկն արհամարհելէ։ Կ'իյնան իրենք, եւ կը մնայ միշտ ժողովուրդն, եւ կը մնայ միշտ կանգուն ժողովրդական մարդն։ Ոչինչ աւելի հզօր է քան ժողովրդականութիւնն։

Նոյն 20

Ուր է Հայուհին, Զմիւռնիոյ Հայահին։ Հայուհեաց, Հայ աղջկանց խումբ կայ ընդմիւռնիոյ մէջ. կը միանան, կը խորհին, կը զմայլին, կ'երգեն, կ'արտասուեն։ Բայց ինչո՞ւ մի առ մի կամ միահալոյն չեն գար՝ բարձրաձայն խօսիլ կամ երգել Բաբապանի մէջ։ Ամեն մարդ չը կարդար, ամեն մարդ չը հասկնար Հ. Հիւրիդի Բաբապան, այն անզուգական գործն։ Նշան Պէրպէրեանի Բաբապանն ամեն մարդ կը հասկնայ եւ գրեթէ ամեն մարդ տասն եւ հինգ օրն անդամ մը կը կարդայ։ Է՞ր Զմիւռնիոյ Հայուհիք՝ եւս հրապուրիչ, եւս բուրմնաւէտ չեն ուզեր հանդիսացնել զայն։ Կէս մը Զմիւռնական թերթ է Բաբապան. արդէն Մետրոպոլիտան վարժարանին հին ու նոր աշակերտք հոն են։ Հոն է իրենց վարպետն ալ, մեծ Զմիւռնացին, Աշխատութեան հոյակապ գլխաւորն։ Իր Առաջին Կրթական դասերն է՞ր իրենց նուագներով չեն գար ընդհատել երբ երբեմն Հայահին եւ իւր ընկերուհիք։ Մեր, Պօլսոյ աղջկանք, կը տենչայինք մտաւոր հաղորդակցութեան մէջ ապրիլ մեր Յոնիածին նրբամիտ քեռք հետ, զաղտփարներ փոխանակել հրապարակաւ իրենց հետ, հրապարակի վրայ միցիլ իրարու՝ մեր երախտագիտական արտայայտութեանց մէջ առ մտաւոր բարեբարս աղբին, առ Մամուրեան, առ Թէրզեան, առ Գաբազեան, — որք Ազգային... Ուսումնական... Խոր... Հուրդէն... անտես կ'առնուին պաշտօնապէս։ Զմիւռնիոյ Հայահին է՞ր չը ձայնակցիր Մելանիին ողբալու համար մեր ազգային կորուստներուն վրայ, անիծելու համար մեր կորուսիչներն, եւ մանաւանդ յորդորելու համար ժողովուրդն որպէս զի վանէ հալածիչներն ու կորուսիչներն, անտեսողներն ու դաւողներն... Տանք ամեն ինչ. մոռնանք ամենէն մեծ կրթիչներն, եւ արգիլենք ամենէն մեծ Պատրիարքին անունն արտասանել, եւ թոյլ չը տանք ուսումն Հայաստանի մէջ ծաւալելու համար ընկերութիւններ կազմել, ևն, ևն։ Գործել է՞ այս Երգարեւ։ «Բաւական գործեցիր շնորհակալ ենք»։ Խօսեցէք դուք ալ Հայուհիք։ Խօսեցէք, գրեցէք, գործեցէք... ապա թէ ոչ, գացէք, Հայութեան ծոցէն դուրս ելէք...

Նոյն 21

Իսկեւ Բաբապանի (Միջերկրականական միութիւն) մէջ Միջերկրական Զօլէրայն յօդուածն յոյժ ծաղակիւ յարմար եկած ըլլալու է։ Լեզուն գիտական, իմաստասիրական է։ Այլ կամ ընդհանրաբար ըսելու տեղ Բաբապանի գործարարութիւնն կ'ըսէ. յիշե-

լախան-իւն, Երազմուհի, Բաբապանի կը գրէ՝ փոխան գործածելու մեր բաղադրական լեզուի սովորական բառերն։ Յօդուածագիրն նիւթապաշտ իմաստասէր մը վկայութեան կը կոչէ, Լանքսանդ, այն կրակոտ իմաստասէրն, հայրենասէրն ու մարդասէրն զոր մայրս ալ շատ կը յարգէ, կը սիրէ, կը պաշտէ։ Գերմանական Զօլէրայնէն յետոյ, «որ Պիլմարքի բաղադրականութեանն ու Մօլդէի հաշիւներէն աւելի նպաստեց Գերմանիոյ միութեանն ու զօրութեանն», Իսկեւ Մեթիստանիէն կ'առաջարկէ կազմել Միջերկրականական Զօլէրայնն, որով Միջերկրականին եզերաց միայն գտնուող ժողովուրդը Անգլիոյ ձեռքէն պիտ'առնեն ճիշդ-բաղարի նեղուցն ու Սուէզի պարանոցն ու Հնդկաստանի ցամաքային ճանապարհներն։ Եւ Զօլէրայնն արդէն կազմուած է։ Բայց ազգասէրին համար ամենէն բերկրաւթն, — ո՞չ, պատրանք է թէ իրականութիւն, — այն է թէ Հայք այդ մեծ առեւտրական դաշնակցութեան մէջ մտած, եւ՝ ամենահին պատմութեան մը մեծագոյն իրաւամբ՝ ամեն ազգերէն նախադասուած են հոն։ Ինչ համակրանք կը զգամ իրաւաբանութեան այն երիտասարդ հայրենասէր Հայ ուսանողին համար, զոր Եւրոպիոյ մեծագոյն անձնաւորութիւնը Սէրէլէ կը կոչեն։ Հապա՞ Շէյխ Ասլու Նատարան, որ Հայերն եղբայր կը կոչէ. հապա՞ այն գերազանց կիներ, ոյր վրայ յափշտակութեամբ եւ երախտագիտութեամբ կը խօսի հայրենասէր Շէյխն. հապա՞... Ոչ, երազ չէ։

ՄԵԼԱՆԻԱ

ԱՐՈՒԹԻՆ ՊԷԿ

Գ.

Մեր նախորդ յօդուածով պատմեցինք թէ ինչպէս Սիւրբազմուր տան դուռն Արութին պէկ կարող եղաւ փախչիլ Թիֆլիզէն եւ երթալ ի Բեդերսպուրկ, ուր պիտի աշխատէր Ուստաշուց դէմ ձեռք առնուած կրօնային բռնաբարութեանց առաջին ստիւղը։

Արութին պէկ կը մտնէ Ռուսաց մայրաքաղաքն եւ իւր բոլոր ջանքն է ներկայանալ Աղէքսանդր Բ. Կայսեր։ Բայց ինչպէս ներկայանալ, ինչպէս խօսիլ. ո՞չ ուսներէն դիտէ, ո՞չ մի միջոց ունի ներկայանալ Կայսեր։ Այն ատեն Ռուսաց Կայսեր սենեկապետ էր Խաչատուր Լազարեան որուն կը բռնասէր եւ հայրենասէր ոգին քաջ ծանօթ էր։ Արութին պէկ կարող կը լինի վաշել սենեկապետի բարեկամութիւնն եւ ի նմանէ ուսանիլ թէ ինչ միջոցներով կարելի էր Կայսեր ներկայանալ անուղղակի կերպով։ Խաչատուր Լազարեան կ'ուսուցանէ ամեն միջոցներ, միայն կը մնայ թարգման մը գտնել Բեդերսպուրկի հայերը լինելով ամէնքն ալ պաշտօնական անձինք, ոչ ոք պիտի ուզէր լինել թարգման։

Բեդերսպուրկ կը գտնուէր մի հայ՝ որ թէպէտ նշանաւոր բայց բաղդատմաբան էր միանգամայն։ Արութին պէկ կը գտնէ այդ անձն որ կը կոչուէր Ղարախանով եւ նմա կը պատմէ մի պարզ միջոց հրապարակու զնա։ Կը պատմէ թէ ինք գտած է Կովկասի մէջ ոսկւոյ ահագին հանքեր, եւ կ'ուզէ զայն իմացնել ուղղակի Կայսեր, հետեւաբար եթէ ինքն իրեն թարգմանը լինի մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէ Տէրութեան Ղարախանով կը հաւա-

տայ եւ կը յանձնարարէ Արութին պէկին քալ իրեն հետ միասին երթալ արքունի պալատն այն միջոցներով զոր սենեկապետը ցոյց տուած էր։

Ծածուկ մուտքերէ, ետեւի դռներէ Ղարախանով հետն առած ձերունի Ուստաշին կը գտնուէր այն սրահն երբ Կայսրն մտած գահաժառանգի թեւը ձեւելու սովոր էր։ Կայսրն յանկարծ կանգ կ'առնու ի տես տարօրինակ մարդու մը, որ նոյն ինքն Արութին պէկն էր։

Ուստաշին հագած է կովկասեան լեռնականներու զգեստ, երկար թեղանիքներով, կուրծքը զարդարուած խաչերով, պարթեւանման անձն, պատկառելի, սպիտակ մազերով եւ պէսերով։ Ղարախանովի ուրտն ուրախութեան տրոփիւններով կը բարախէ. ոսկւոյ հանքերն արդէն իրենք կը կարծէ, մինչ ձերունին գետինը ծունկ չորած, ձեռքերը բաց, իրր կ'աղօթէ Աստուծոյ Կայսրն աղա՞ծ կը մնայ. եւ երկայն թեղանիքէն վեր վերցնելով կ'ըսէ. «Ո՞վ ես դու, Վրացի՞ ես»։

—Ոչ, հայ եմ, կ'ըսէ։
Եւ ձերունին կը պատմէ թէ ինչպէս երեսուն տարի է ի վեր ինքն ու իւր հայրենակիցներն ամենայն բռնութեամբ կը չարչարուին իրենց կրօնի համար։

Աստուած եւ Կայսրը միայն ունինք մեզ յոյս, կը դռչէ ձերունին։ —Եւ թարգմանն աղա՞ծ կը թարգմանէ։

Բարեսիրտ Աղէքսանդր Բ. խորապէս յուզուած կը հրամայէ՝ որ արքունեաց հրամանատարն իրեն ներկայանայ չուտ։ Սա կուգայ եւ Կայսրը բարկութեամբ կ'ըսէ.

—Ինչ է այս գոր կը տեսնեմ, ինչե՞ր են որ կը լինին իմ կայսրութեան մէջ. ինչո՞ւ համար խեղճ ժողովուրդներն իրենց կրօնից համար կը տառապին։

Կայսեր այս սաստիչ կ'ահաբեկի հրամանատարն եւ կը յայտարարէ թէ՛ հետամուտ կը լինի ընեմ եւ իմանալ։

Կայսեր այս հրամանը կը հաղորդուի Ռուսաց Սինօդին եւս Արդէն Թիֆլիզի Էկզարքն գրած է Սինօդին թէ՛ Արութին պէկ վիճակագրուող անձ է, պէտք է նմա հետամուտ լինել, թոյլ չտալ որ Կայսերական բարձր պաշտօնէից մօտենայ։ Բայց Արութին պէկ արդէն Կայսեր ներկայացած է։

Ռուսաց Սինօդն ընդունելով հանդերձ Կայսեր հրամանը, կը ջանայ որ խաղցնէ, մոցնել տայ եղելութիւնը։ Բայց Արութին պէկ կը գոչէ. «Եթէ հիմա անմիջապէս վճիռ չտաք, նորէն իսկոյն Կայսեր կ'երթամ։ Ծուարած Սինօդը նոյն հետայն որոշում կուտայ թէ ինքն եւ իրենները լուսաւորաւան են։ Կայսրը կ'ստորագրէ կրօնից աղատութիւն եւ 1857 թուականին Արութին պէկ յաղթանակաւ կը մտնէ ի Թիֆլիզ, ի մեծ ամօթ եւ խայտառակութիւն Էկզարքին»։

Ամբողջ Թիֆլիզ ցնծութեամբ կ'ողջունէ զնա եւ կը մկրտէ Վարդան Մամիկոնեան անուամբ։ Սիւրբովի գերդաստանն աւելի քան երեսուն տունէ բաղկացեալ բուրդին ազատ կը թողուին իրենց կրօնի ընտրութեան մէջ։

Ժամանակը կ'անցնի, Արութին պէկ կը վախճանի, եւ սակայն ուսն էկզարքներն իրենց պարտութիւն չեն մոռնար. նոր էկզարքը կ'ուզէ չարունակել իւր նախորդին կրօնական քաղաքականութիւնն եւ սակայն Ալեքսան պէկ Սիւրբով կը դիմադրէ և կ'ըսէ. «Ինչ կուրի նորա դէմ. ուսն էկզարքականք որ չեն մոռցած Արութին պէկի վարպետութիւնն, կ'ուզեն բոլորովն սքսորել Ալեքսան պէկն որպէս զի ասպարէզն իրենց առաջ բաց մնայ»։

Մի օր յանկարծ կը ձերբակալուի Ալեք-
սան պէկ եւ կ'աքորորուի ի Կրասնովոյսը ուր
մինչեւ ցայսօր կը գտնուի խիստ հսկողու-
թեան ներքեւ :

Ահա խնդիր մը զոր Հայոց Կաթողիկոսն
իւր խորին ուշադրութեան առարկայ պիտի
ընէր եւ սակայն . . . :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
Վ Ե Ր Ջ

ԵՐԵՒ ՀԱՐՑԵՐ

ՈՒՈՐԱՎ
(RONDEAU)

Գիւտէ՞ք ինչու, գու, կատաղի
Մըսքնէ՛ ծովն որսապահն,
Եւ փրկիք իւր ջուրերն աղի,
Մինչ ճէ՛գ մի մայր մօտ եղբորին,
Հայի ծովուն եւ նրաղի . . . :

Թուխ, անընշան, մերկ մի կոնգի
Մէջ՝ ուր դրնի բոյն սարկին՝
Թոյն կը ճեղու օձն աղտեղի . . .

Գիւտէ՞ք ինչու . . . :

Իւր քեռոց մէջ ոսկեծրղի,
Ջորս ողողին շող Արեգին,
Գլուխ երբ հանգչի գաղտագողի,
Կը սեղմէ՛ գայն Կուսիկն, ուժգին,
Եւ՝ մինչ ես լամ՝ Նա ծիծաղի . . .

Գիւտէ՞ք ինչու . . . :

9 Ապրիլ 1886

Ա. Գ. Փ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ՏՓՂԻՍ, 1 մարտ

Գծուար թէ այս մեծ պատին մեր ե-
կեղեցիներում կարելի լինի մի փոքր ի շատ
օրինակոր բարոյ լսել եկեղեցու բեմից :
Յայտնի չէ ինչ առիթից դրդված, հրամայ-
ուած է խառօրէն հետեւիլ եկեղեցու մա-
ւող բարոյներին : Ամենաչին բանին ան-
գամ պէտք է մեծ նշանակութիւն տան .
գուցէ չուտով ուսու պիտի անհաշիւ մուտք կը
գործէ եւ Հայոց եկեղեցին, քննելու հա-
մար այնանգ երգուող երգերը, ինչպէս
Վրաց, ուսու տեսուչներն այժմ ամէն քայ-
լափոխում մտնում են Հայոց գործերը եւ
անուամբ ամէն տեսակ աններելի եւ շատ
անգամ ալ ծիծաղելի կարգադրութիւններ
ինչպէս երեւում է Հայոց Կաթողիկոսի գո-
յութիւնը մառացվում է. եթէ կառավարու-
թիւնը կասկածում է այս կամ այն հայ զու-
րոցի վրա, եթէ կասկածում է այս կամ այն
հայ քահանայի Հայոց եկեղեցում առած
քարոզի վրայ, պէտք է այդ բոլորի մասին
Կաթողիկոսին դիմել—իսկ ուղղակի միջա-
մտութիւնը վտանգաւոր հետեւանք է գու-
շակում . . . :

Եկառավարութիւնը կարծէք վճուել է
այլ եւս մի օր եւ է նոր րազիր եւ ամա-
գիր թոյլ չտալ, թէ եւ եղածներն էլ են
թարկվել են անպատմելի խտութիւնների
եւ ճնշումների : Հ. Առաքելեանին իրաւունք
չտուեցին հրատարակել Շառլ ամապիրը,
որի մասին նա կէս տարի առաջ թոյլտուու-
թիւն էր խնդրել : Թոյլ չտուեցին, որ Սե-
զ- Հայաստանի րազիր իրերն ամապիր հը-

րատարակուի, ուստի եւ Մէլան բարոյին
դադարեցուց : Յանկարծ իւր կար մի թա-
րոնական շարժում երթ հրատարակել բայց
այդ էլ անկարելի է : Խտութիւն ամէն բա-
նի մէջ. ճնշում ամէն քայլափոխում : Գծո-
ւթիւնն անհղով անուամէ Ռուսաստանում,
սկսած Պետերբուրգից դէպ ի ամէն կողմ :
Իսկ այսպէս գուցէ երկար չի կարելի շա-
րոնակել :

Մշտ հրատարակել է հետեւեալն, որը
բացատրութեան կարօտ չէ :

Մեզ խնդրում են տպել հետեւեալ նը-
կատարութիւնը . « Թէ Արքիեպիսկոպի եւ
թէ թիւրքաց-Հայաստանի ու Պարսկաս-
տանի զանազան կողմերից Թիֆլիս, Բա-
գու եւ ուրիշ նշանաւոր քաղաքներ եկող
մշակների, հիւանների, որմնագիրների,
բարտաշների եւ առհասարակ այդ տե-
սակ բանւորների եւ արհեստաւորների զը-
րութիւնը իսկապէս անտանելի է : Ուսում-
նասիր լով զբանց կեանքը, մարդ այն եզ-
րակացութեան է գալիս, որ զբանք ոչ թէ
միայն խրված են բարոյական եւ ֆիզիքա-
կան տանջանքների մէջ, այլ եւ գրանց ամ-
բողջ աշխատանքն էլ շատ անգամ իրանց չէ
պատկանում : Ուսում չէ յայտնի, թէ ի՞նչ ո-
ղորմելի եւ դառն կեանք են վարում Հին-
Նախնիներն եկած մշակները եւ Հայաս-
տանի պանդուխտ մշակները : Ուսում չէ յայտ-
նի, թէ ինչպիսի գրկանքների եւ տանջանք-
ների են ենթարկվում զանազան կողմերից
մեր մեծ քաղաքները եկած արհեստաւոր-
ները՝ որպէս զի մի քանի կողմից փող աշխա-
տեն՝ իրանց պարտաւորով համար : Բայց
բանը հէնց նրանումն է, որ այդ մշակները
եւ արհեստաւորները միանգամից գրկում են
իրանց բոլոր աշխատանքից, զանազան
կապաւորումներ, գործարանների կառավա-
րիչներ, եւ այդ տեսակ մարդիկ ամիսնե-
րով եւ տարիներով իրանց մօտ են պահում
մշակի կամ արհեստաւորի աշխատածը, յոյս
տալով, որ վերջումը, հայրենիք վերադա-
նալիս տուտով իրանց յետ կը դարձնեն :
Այդ յոյսով՝ ամիսներով բանում են միա-
միտները, աշխատում են, — եւ ահա երբ
ամբողջ տարի անցնելուց յետոյ ուղում են
տուն վերադառնալ, եւ իրանց փողերը յետ
են խնդրում իրանց առանձնից, այդ աչ-
նելը կամ ամիսներով յետաձգում են եւ
կամ բոլորովին չեն տալիս, եւ ուրանում
են փողը : Խեղճ մշակի լացը, աղքատները
չէ օգնում : Այդպիսով տարիներով տանջը-
ւելուց յետոյ, օտարական մշակը կամ ար-
հեստաւորը փախչի գրկում են իրանց բո-
լոր աշխատանքից, մինչդեռ միւս կողմից
քաղցած ընտանիքը հաց է խնդրում : Եւ
այսպիսով շատ անգամ տարիներով քրտինք
թափած արհեստաւորը եւ մշակը վերա-
դառնում են իրանց հայրենիք բոլորովին
գաւառիկ գրողանով եւ յուսահատված : »

Ռ. Հ.

ՇԱՄԱՆՆԵՒ ԳԻՆԻՆԵՐ

ՆՈՒԼ ԵՒ ՇԱՆՏՈՒՆ

Այս ամենաընտիր եւ հանրաժանութ գի-
նիներուն մայրաքաղաքին ներկայացուցիչ
է Պ. Ֆ. Լուի Գոմանտինկէր : Գնորդք այս
կերպիւ կրնան հայթայթել վաւերական
գինիներ :

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳԻՆԻՆԵՐՈՒ

Այս առաջնակարգ կարմիր եւ սպիտակ
գինիներն, տակաւակով եւ շիւքով, 1834էն
մինչեւ 1880, կը ծախուին հնութեան հա-
մեմատ : Պէտք է ընթացիկ գնոց ցուցակն
աւանու Պ. Ֆ. Լուի Գոմանտինկէրի, Բե-
րայի մեծ փողոց, 179 եւ 437 :

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԻՆՉՈՒ

Հիասքանչ լուսնեակի գիւղեր է : Մեղմի
լոյսը ծաւալած է ամենուրեք, եւ զաշակե-
րու վրայ, եւ հետեւոր կանաչորակ անտա-
ռի չորս կողմն եւ հեղտահ գետի մակե-
րեւոյթն . . . Անշուշ եւ խորին լուսնիւ
է շուրջանակի, միայն հետուն երբեմն կը
հնչէ անորոյ մի ձայն եւ վերստին ամենալի-
նն կը խորասուզի հմայիչ քննութեան մէջ .
Համայն բնութիւն կը քննանայ : Անքուն
միայն նէ—մարդկային անօրէնութեան զըժ.
բազդ զօհը . . . Նստած չողաղարդ գե-
տեղը, կը խորհի իւր դառն ճակատագիրը
կը խորհի ի՞նչ ընել, ամբողջովին թաթախ
ուի՞լ աշխարհի ապականութեան ծովի մէ-
թէ առ յաւէտ վերջ տալ իւր աղետալ
կեանքին . « Ի՞նչ ընեմ, ո՞ւր երթամ, ո՞ւր
դնեմ գլուխս : Ո՞վ աշխարհ, ո՞վ մարդկային
անիրաւ դատաւճիւռ . . . »

Ներս պատմութիւնը շատ պարզ է : Ե
քաղաքամասի միջակ հարուստ մարդ ու մ
աղջիկն է : Անխոհեմարար մտերմացու դը-
րացիի որդւոյն հետ, որ, ըստ ժամանակի
աստութեան բարեկիրթ էր բառին կատար-
եալ իմաստով, թէ եւ այդ ամեն բարեկիր-
թութիւնը բաւերու մէջ միայն գոյու-
թիւն ունի : Գեղեցիկ, խելացի եւ ճարտա-
բաստ էր նա, այնու ամենայնիւ ոչ նուազ
դժուարութեամբ գրաւեց գեղանի Վեր-
գինէի սիրտն, ոչ նուազ դժուարութեամբ
որոգհետեւ նէ բնածին համաճարեղութեան
հետ ստացած էր լաւ դաստիարակութիւն
եւ քիչ շատ զգոյշ էր կեանքի խաղերու
մէջ : Բաւական ուղ զգաց սիրոյ ախորժակն,
սակայն այդ ախորժակն անգամ մ'երեւան
գալէն յետոյ անհամաչափ սկսաւ զարգա-
նալ, սաստկանալ : Այս եղաւ, ըստ ամե-
նայն հաւանականութեան, գլխաւոր պատ-
ճառներէն մին այն կացութեան, որի մէջ
անսանք գիրքն : Երիտասարդը ծանօթանա-
լով Վերգինէի հետ նախ վստահութիւն
գրաւեց իւր լաւ ծանօթ, իսկ յետոյ, իր
բարեկամ, որի առաջ, առանց քաշուելու
աղջիկ մը կարող է բանալ իւր սիրտն :

Այստեղ ահա երեւան եկաւ առն գե-
րազանցութիւնը կնոյ վրայ . մին ուսում
ստացած համալսարանի մէջ՝ միւսն դաս-
տիարակուած իգական միջնակարգ կրթա-
րանի մէջ, հետեւաբար մին հօր իւր փա-
տերու եւ տեսութեանց մէջ, իսկ միւսը տը-
կար : Սոյն պարագայի շնորհիւ իմաստա-
պարտը վերջապէս հասաւ իւր նպատակին
Վերգինէ ընդունեց առաջնակարգ մարդ
տեսութիւններն արական եւ իգական սե-
ւերու յարաբերութեանց վերաբերեալ : Եւ
րիտասարդն առաջնակարգ մարդոց տեսու-
թեանց հետ կը խառնէր եւ իւր ցանկալի
գաղափարները . նորա ճարտասան քարոյ-
ները պատիւի, ճամբարութեան, մարդասի-
րութեան, — առհասարակ բարոյականու-
թեան մասին, արձագանք գտնելով ներ-
տակալին անբիծ սրտի մէջ, վերջնակա-
կերպիւ հրապուրեցին պարզամիտ աղջիկն
որ իրականութեան մէջ քիչ տեսած եւ ըն-
ճանաչած էր աշխարհիս մարդիկը : Վար-
դութեան այս եղանակը կամաց կամաց յա-
ռաջ բերաւ կանխանկատ արդիւնքն, եւ
սէրն սկսաւ ծլիւ աղջկան մէջ . գէպի երկ
առասարդն :

Մայիսեան հիւնալի իրիկուն մը իսկ

մենտորի հետ դրամներով պարտքեր մէջ, վերջինէն բռնուն վիճաբանութեան մը ժամանակ յանկարծ վազեց թուփայն, որի մօտէն կ'անցնէին, եւ սկսաւ արցունք թափել ու լալ հեկեկանօք: Ճարպիկ Լոյսը վարպետութիւնն էր այս եւ երբ տեսաւ իւր խաղի յաջող ելքն, ինքն ալ յառաջացաւ դէպի թուփայն ու սկսաւ հանդարտեցնել վերջինէն սիրտը, մխիթարել: Մի եւ նոյն ժամանակ ամենայարմար նոսրի էր դառնալ գրիւնը եւ համբուրելու զնէ՝ մխիթարելու կեղծ պատճառաւօք, ուստի եւ սկսաւ համբուրել անդադար... խոստովանեցաւ իւր սէրն, երգութեամբ հաւատարիմ մնալ եւ ի վիթարէն ստացաւ այն ինչ որ նմանօրինակ պարագայներու մէջ կը արուի սովորաբար: Վերջինէն անարգել անձնատուր եղաւ...

Նոցա վիպական կեանքը տեւեց շուրջ երկու շաբաթ: Վերջապէս մի գեղեցիկ առաւօտ Վերջինէն կ'ստանայ նամակ մը որով իր սիրելին կը գրէ թէ ստիպողական դործեր կը հարկադրեն զինքը մեկնիլ եւ զըզբազարար ընդ երկար: «Եթէ Աստուած յաջողէ, կը տեսնուինք, կը գրէր նա, եթէ ոչ կը նշանակէ որ ճակատագիրն այլապէս տնօրինած է: Անտարակոյս, աւելորդ է նկարագրել Վերջինէն վիճակն այդ նամակէն յետոյ:

Անցան մի քանի ամիսներ եւ ներս արտի վերջը բնականաբար դեռ եւս չէր բուժուած եւ ընդհակառակն մի օր, աւելի ի խոր խոցեցաւ երբ զգաց թէ մայր պիտի լինի: Նամակի պատճառած անձկութիւնը, վիշտն, անկարող էին համեմատուիլ այն սոսկման հետ զոր կը պատճառէր նմա իւր այս նոր վիճակը: Նորանոր մտածումներ կու գային կը դիպուէին իւր մտքի մէջ: «Ինչ պիտի ընեմ եթէ իմանայ հայրս Պիտի նախատէ զիս, պիտի ըսէ՝ դու իմ ազգիկը չես այսուհետեւ, եւ պիտի արտաքսէ տունէն: Ինչ պիտի ընեմ այն ժամանակ առանց անունի, առանց նիւթական կարողութեան, մի խօսքով առանց մարդկօրէն ապրելու ո եւ է յուսալիկ հաւանականութեան...»

Եւ գնաց այն գետեղան, ուր տեսնէր զինք պատմութեան սկզբին, եւ այն տեղ խորին մտատանջութեան մէջ կը խորհէր վերջնական վճիռ մը տալ իւր կեանքին:

—Մայր լինելուս համար չէ՞ որ կը ստակամ, կը խորհէր ինքնին, ո՛չ, ուրիշ պիտի լինիմ անձնա նուիրել մանկանս, բայց ինչպէս, ինչ եղանակաւ, — ահա՛ անլուծելի խնդիրն: Կատարելապէս անկար եմ բան մը ընելու նորա համար, այո՛, անկար եմ եւ միմիայն զատապարտուած եմ Փիլիքական եւ բարոյական տանջանաց... Ենթադրենք, որ առ ժամանակ մի կարողանամ ապրեցնել ինքզինքս, նման այն բազմաթիւ կանանց, որ պատահաբար կ'ընկնին այս — ձիւնադէլի է՛նք — մեղքի մէջ: գեղանի եմ... բայց ո՛չ, ո՛չ, չեմ կարող... հապա՛ ինչ ընեմ քանի որ այդ քանը չեմ կարող ընել...:

Եւ սկսաւ լալ գտնապէս, անսահման վհատութեամբ ձեռները գլխին զարնելով: Ապա ձեռներով պատեց իւր դէմքը, գլուխը խոնարհեցուց ծունկի վրայ եւ այդ դիրքի մէջ դարձեալ սկսաւ խորհիլ... Ինչո՞ւ նա, առհասարակ բոլոր այր մարդիկ, այսօրինակ գարշելի դործեր կատարելով հանդերձ այնու ամենայնիւ կեանքի մէջ չեն զրկուիր իրենց նախկին վիճակէն: Ինչո՞ւ մարդկային ընկերութիւնը զրեթէ անտարբեր կը վերաբերի նոցա նմանօրինակ ընթացքի նկատմամբ եւ մի և նոյն ժամանակ ժամանակ ծանր քարեր կ'արձակէ մեր վը-

րայ... Ինչո՞ւ այսպէս է այս ամենն ինչո՞ւ միայն մենք արժանի ենք պատժի եւ այն եւս յանցանքի բազմաթիւ անհամաչափ պատժի: Ինչո՞ւ պարկեշտութիւնն, ամօթ խածութիւնն այսպէս զղուշութեամբ կը պահպանուին, եւ նոցա եղծման համար միայն մենք կանայքս, կը պատուհասուինք, այն եւս, խստիւ: Ձե՞ որ նա ինքը կ'ըսէր թէ բարոյականութիւնն համահաւասար է երկու սեռերու համար: Արդ ո՞ր է ճշմարտութիւնը: Թէ բարոյականութեան մասին կարելի է միայն դատաւարութիւններ ընել, իսկ կեանքի մէջ զայն ընդունին եւ գործողութիւն ոչ: Ես ահա կը կորսուիմ, ինձմէ առաջ եւս շատեր կորսուած են եւ անշուշտ, դժուար է պիտի կորսուին: միթէ այս մեր կեանքի բարոյական սկզբանց սովորական գործողութեան պարզ ապացոյցը չէ՞: Ինչո՞ւ այսպէս է այս ամենն: Ուրեքդէն երեւան եկած է, ինչ հիման վրայ ծաղու՛մ առած է մեր եւ արանց յարաբերութեանց այս երկբաժանումն, որ կինը կը դատաւարուի ընդ միշտ իսկ այն ոչ: Միթէ այս հակառակ չէ՞ աշխարհային բարոյագիտութեան: Ձե՛մ հասկնար, չե՛մ ըմբռներ... Գլուխս կը դառնայ, վատ կ'զգամ ինքզինքս, աչքերս կը խաւարին... Դեռե՛լ ահա՛ միակ ճարս... Ինչո՞ւ սպիրտ, քանի որ չպիտի կարողանամ մարդկօրէն ապրիլ, քանի որ չկայ յուսոյ եւ ոչ իսկ կաթիլ մը պայծառացնելու համար իմ մտայնապատ կեանքը...

Եւս եւ մօտեցաւ գետեղանին, —Այլ եւս ես պէտք չեմ, իբր մարդ, այլ պէտք եմ միայն, իբր՝ առարկայ, ուստի թո՛ղ այսուհետեւ այս հեղասահ գետին ճարտասան լեզուով՝ պատմեմ մարդկային մարիսեցիական բարոյականութիւնը... հազիւ թէ վայրկեան մ'անցած էր որ դժբաղդ Վերջինէն անյայտացաւ գետի մէջ, եւ միայն այդ պահուն ընդհատուեցաւ գիշերուան անշուշտ լուսնիւնը, վայր ընկած մարմնի արձակած բռնազրօսիկ սուր ճիչն: Ապա վերստին ամեն ինչ լռեց, վերստին բնութիւնը խորասուզեցաւ հմայիչ գիշերուան դրկացը մէջ:

Թարգմ. Բուսերէնէ Պ. Տ.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Քամուս-Քաթիպա որ հիւանդ լինելով գնացած էր Մոսկվա եւ Բեռլին սկզբին ինքզինքը խնամելու, այժմ բոլորովին առողջացած վերադարձած է ի Նոր-Նախիջեւան:

—Մոսկուայի համալսարանի հայ ուսանողներէն մի քանի երիտասարդք խումբ մը կազմած են պատարագի ժամանակ Հայոց եկեղեցւոյ մէջ երգելու համար: Այս եկեղեցւորական ձեռնարկ շատ լաւ տալաւ թութիւն ըրած է Մոսկուայի Հայոց վրայ, այնպէս որ հայ ժողովուրդն սկսած է աւելի յաճախել եկեղեցի:

—Տաղանդաւոր գերասան Պ. Աղամեան դիտաւորութիւն ունի մեծ պահոց մէջ մի դասախօսութիւն ընել Թիֆլիզի մէջ Շէյքսպիրի գրուածոց վրայ:

—Կեղծ թղթադրամ շինողներու ձերբախուցիչութիւնները կը շարունակուին Երեւանի մէջ: Ձերբախուցիչներէն ոմանք խոստովանած են իրենց յանցանքը եւ մինչեւ անգամ անուանած են իրենց ընկերներն:

—Փետրուարի 19ին Մոսկվայ, Լազարեան ձեմարանի Դահլիճի մէջ կատարուեց է

Պ. Սմբատ Ծահաղիզ-Կոմսարականի ուսուցչական պաշտօնավարութեան քսանեւ հինգ ամեայ յօդուանը:

Պ. Ծահաղիզեան լաւ գիրք մը ունի Ռուսահայոց գրականութեան մէջ. իւր դըլուխ գործոցն է ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏՏԸ գեղեցիկ բանաստեղծութիւնն որ 25 տարի առաջ գրուած է թէպէտ, բայց մինչեւ ցարդ միշտ անործանօք կը կարդացուի: Նորա երգերն ինչպէս է ԱԶՆԻԻ ԸՆԿԵՐՆ եւ ուրիշ բանաստեղծութիւններ միշտ համակրելի եղած են:

Իբր հրապարակագիր Պ. Ծահաղիզ պաշտպան հանդիսացած է Ստեփանոս Նազարեանցի եւ իւր «Հրապարակասօսի ձայնը», որ յոյժ գեղեցիկ գրուած մ'է, ջերմ ջատագովութիւն մ'է մեծանուն Նազարեանցին:

ՂԱՐԱԲԱՂԻ (2)
ԱՍՏՂԱԳԵՏԸ
Գ.

ՋՈՒՄԵՆՈՒԿԻ ՅԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Նեղ, մութ, ստորերկրայ բանտի մէջ Ջումուդը նստած էր չղթայական որպէս մի յանցաւոր: Եւ սակայն երիտասարդին դէմքը կ'արտայայտէր խորին ցնծութիւն: Շղթայակիր ձեռքերը բացած կը բացադանչէր երբեմն, ողջունելով կարծես բացակայ ոմն:

—Սալիհա՛ս, իմ անգին Սալիհա՛ս, կը դռնէր. բուկդ եմ յաւիտեան քեզ պիտի լինիմ ո՛չ որ, ո՛չ ճակատագիրն, ո՛չ մարդիկ կարող պիտի լինին զմեզ բաժանել: Կը կըռուրիմ ամէնուն դէմ, կը հպատակիմ ամէն թշուառութեանց, բարեք կը համարիմ ոչընչանալ քան դաւաճանել այն երգման զոր տուած եմ քեզ: —Բայց ինչպէս...:

Նորա խօսքն ընդհատեց մի աղմուկ, որ լսելի եղաւ բանտի մօտը: Դռները բացուեցան. նօթարները ներս հրեցին աստղագետը, կրկին կողպեցին դռներն եւ հեռացան:

Ի սկզբան Ջումուդը չկրցաւ ճանչել թէ ո՞վ էր իւր այդ նոր ընկերը: Բայց լսելով այն գտնադատներ զոր նա կը մխրթար, դուշակեց թէ այն աստղագետն էր ում կը հաւատար իւր հօրեղբայր: Մտածեց թէ այդ բանասերութիւն խորամանկութիւն մ'էր որով իւր հօրեղբայրը միջոց կ'որոնէր այդ խաբեբայի ձեռքը համոզել զինքն ընդունելու իւր առաջարկութիւններ: Ունեւալով այս կասկածն երիտասարդը լուռ կեցաւ, առանց ուշադրութիւն ընելու իւր նոր զրացոյն:

Լուռութիւնը խղեց աստղագետն, երկշոտ ձայնիւ հարցնելով.

—Ո՞ղջ էք դուք, մեկը-Ջումուդ:

—Կարծեմ ձեզ հարկաւոր չէ զայդ գիտնալ, պատասխանեց երիտասարդը:

—Ինչպէս հարկաւոր չէ. միթէ դուք կը կարծէք որ ես չե՞մ ցաւիւր ձեր վիճակին վրայ:

—Խորհուրդ կուտամ ձեզ ցաւիւ միայն ձեր մասին:

Խօսակցութիւնն երկար տեւեց երկու բանասերներ միջեւ: Ջումուդը կը խօսէր կծու լեզուաւ. աստղագետն ողոր եւ համոզիչ:

—Լսեցէ՛ք, մեկը, ըսաւ աստղագետն յետ երկար խօսակցութեան, որով բաւա-

կան խոստովանած էր Զուգուղի անվտանգութիւնը, այժմ մենք երկուքս ալ կը գտնուինք վանդակի մէջ. պէտք է աշխատիլ առաւել աշխատել այս տեղէն. վատահեցէ՛ք ձեր ծառային. պատմեցէ՛ք թէ ի՞նչ պատճառներ կը հարկադրեն զձեզ գիտնալիս այսպէս ձեր հօրեղբոր ցանկութեանց: Եւ կ'աշխատիմ այն ատեն հնարել մի ո՛ր եւ է միջոց գծեզ արտաբերու:

—Պատճառը չեմ կարող յայտնել, մի գաղտնիք է, պատասխանեց Զուգուղի:

—Միթէ կը մտնա՞ք, մեկիք, որ ես տեղեկութիւններ ունիմ երկնային լուսատուներու ընթացքի մասին. թէ կարող եմ նախագուշակել բախտաւորութիւն եւ անբախտութիւն. թէ կը գուշակեմ բարեխաղող բողբոջներն յորում կարելի է գործի ձեռնարկել: Ես կրնամ ձեզ շատ օգտակար լինիլ միայն թէ՛ արժանի ըրէք զիս ձեր ծառան լինելու: Մօրուքովս կ'երգնում որ դուք կարող չէք գտնել մի սպասաւոր քան զիս հաւատարիմ: Ձեր հօրեղբոր խիստ բընաւորութիւնը զիս ծանօթացուցած է: Երբ ծառայեմ նորա մօտ՝ պէտք է ամէն բոլոր մահն աչքի առաջ ունենալ: Ի սէր Աստուծոյ, հաճեցէք ընդունիլ զիս ձեր ծառան եւ ես կ'աշխատիմ իմ երախտագիտութիւնս արժանաւոր կերպով ցոյց տալ ձեզ:

Զուգուղի բնաւորութեամբ շատ բարի էր: Աստղագէտի դրութիւնն իսկապէս իրեն ցաւակցութեան արժանի երեւցաւ:

—Լա՛ւ, ըսաւ երիտասարդն. ես կ'ընդունիմ քու խնդիրք, բայց գիտես թէ զայն կատարել ինձմէ կախուած չէ: Նախ չգիտեմ թէ հօրեղբայրս ե՞րբ կը բարեհաճի ազատել զիս այս փառաւոր ապարանքէն. երկրորդ՝ թոյլ կուտա՞յ քեզ ծառայել ինձ մօտ:

—Շնորհակալ եմ, հազար անգամ շնորհակալ եմ ձեզմէ, մեկիք: Թող ես չունենցած լինիմ եթէ ամեն բոլոր չաշխատիմ զիս արժանացնել ձեր ողորմածութեան: Իսկ զաւրով մեր բանտարկութեան, իմ կարծեօք այդ երկար չաւեր: Երբ գծեզ այս տեղ բերին, ձեր հօրեղբայրը սաստիկ տխրեցաւ եւ խորատուրեցաւ մտածութիւններու մէջ: Նա սկսաւ նախատել զիս, իրր թէ ես պատճառ եղայ որ ինք կուտեցաւ ձեզ հետ: Ես կը ճանաչեմ ձեր հօրեղբայրը. նա թէեւ չափազանց զիւրաբորբօք մարդ է, բայց շուտ կը մոռնայ անցեալը:

Բայց դո՛ւք, մեկիք, դո՛ւք էք մեղաւորը: Լաւ մտածեցէք: Գուք կ'ստիպէք զիս երգմնազանց լինել եւ կ'ենթարկէք զնա ներքին պատերազմներու ու վտանգաց:

—Կը հասկնամ, չա՛մ լաւ կը հասկնամ, գոչեց Զուգուղի. —Բայց նորա փափաքը կատարել կախուած չէ իմ կամքէն: Այդ անկարելի է:

—Արժանի ըրէք զիս, մեկիք, ձեր վստահութեան. այդ նշանաւոր գաղտնիք պատմեցէք ձեր ստորակին: Ձէք զղջար եթէ ձեր սիրտ բանաք իմ առաջ:

Զուգուղի տեսաւ որ աստղագէտն անկեղծաբար կը կարեկցէր իրեն. եւ վճռեց հաղորդել նմա իւր գաղտնիք, աւելի այն պատճառաւ որ պէտք կ'գգար թափել իւր սրտի ցաւեր ու եւ իցէ մէկու մը առաջ:

—Լա՛ւ, ըսաւ աստղագէտին, կը պատմեմ քեզ այն հանգամանքներն որք կ'արգելուն ինձ ընդունիլ հօրեղբորս առաջարկութիւնը: Բայց կ'երգնում որ եթէ ընդունէ յայտնէ մի ո՛ր եւ իցէ մարդու իմ խորին գաղտնիքը. դու անպատճառ կը կորսուիս իմ ձեռքով. ո՛չ մի գորութիւն կարող է ազատել զքեզ իմ վրէժխնդրութենէ:

Աստղագէտը պատասխանեց.

—Թող ես մի եւ նոյն բոլորէն Գոնիւղի (խոզ) կերպարանք ստանամ եւ այնպէս մընամ մինչեւ վերջին դատաստանի օր. եթէ անխորհրդապա՛հ գտնուիմ:

Եւ ի՞նչ օգուտ ինձ դաւաճանել իմ տիրոջ: Ձեզ յայտնի է, մեկիք, որ ոչ թէ լոկ հետաքրքրութեան համար կը խնդրեմ հաղորդել ինձ ձեր պատմութիւն, այլ առաւելապէս նորա համար որ ես միջոց ունենամ լաւ մտածելու. արդեօք չե՞մ կարող մի ո՛ր եւ իցէ օգուտ բերել ձեզ եւ այդ ու պացուցանել իմ անձնւիրութիւն:

Գուք գիտէ՛ք, մեկիք, որ ես թափառած եմ ամբողջ աշխարհ, տեսած եմ հնդկներն եւ գարրներն, ուղղափառ մուսուլմաններն եւ անմաքուր շնուտներն եւ այլն:

Զուգուղի ընդմիջեց աստղագէտի խօսքն ըսելով.

—Լա՛ւ, լա՛ւ, քեզ կը հաւատամ. հիմա լսէ՛:

Եւ նա սկսեց պատմել հետեւեալը:

Դ.

ՋՈՒՄՇՈՒԴ ՋՈՒԱՆՇԻՐՅԵՆՆԵՐՈՒ ԲՈՎ

«Հայրս շուտ մեռաւ. յետ նորա մահուն հօրեղբայրս իմ խնամակալն եղաւ: Տառն եւ եթէն տարեկան էի, երբ նա ինձ տուաւ մի յանձնարարական նամակ որ գըրուած էր Զուանչիրցիներու մի ծերունի ցեղապետի անուան:

Զուանչիրցիներու այդ քաջ եւ պատեւազմաւոր ցեղ կը բնակէր մեր լեռներու վրայ, արեւմտեան կողմն: Հօրեղբայրս կը ցանկար որ ես ապրելով այդ լեռնաբնակներու մէջ, ընտելանայի նոցա բարուց ու վարուց պարզութեան, սովորէի նոցա ճարպիկութիւնները զէնք ու նիզակ գործածելու մէջ, եւ յետոյ վերադառնալի որպէս մի վարժ պատերազմող, որ կարենար միշտ փառօք պսակուիլ պատերազմի դաշտին վրայ:

Հօրեղբայրս տուաւ ինձ մի գեղեցիկ նժոյգ, լաւ զէնքեր եւ փող. չորս տարի ժամանակ որոշեց իմ վարժութիւններու համար եւ ես ճանապարհ ընկայ գացի:

Ճանապարհորդութիւնս ետեք օր տեւեց. չորրորդ օրը տեսայ իմ առջեւ Զուանչիրցիներու եղեգնեայ տաղաւարները: Նոքա այդ ժամանակ չուած էին, իրենց հօտերու հետ, լեռներու ամենաբարձր գագաթներու վրայ, որովհետեւ եղանակը սաստիկ սոթային էր:

Որքան մեծ գոհունակութեամբ կը նայէի Զուանչիրցիներու իջեւաններու վրայ:

Անոնց բազմութիւն հօտերն ազատ կը շրջէին ձոխ, կանաչադարձ արօտամարգերու մէջ: Անհամեմատ գեղեցիկ ձիերը կը թռչկոտէին, կը կայտառէին: Օդը բարեխառն էր. տարօրինակ քաղցրութիւն մը կը տիրէր ամէն ուրեք: Արեւը դեռ մայրը չէր մտած՝ երբ հասայ անդ: Էրիվարդիկ հաւաքուած կը խօսակցէին: Ոմանք անհոգ նստած իրենց վրաններու մուտքի առջեւ կը ծխէին: Մանուկները կը խաղային անոնց բոլ: Կանայք չէին ծածկուած այն անտառների քօղերով չորս մենք կը գործածենք: Նոքա, երեսներն բոլորովին բաց, նստած էին վրաններու առջեւ եւ զբաղած էին զանազան աշխատութիւններով: Ակներեւ էր կանանց ժրջան աշխատութիւնը, մինչ էրիվարդիկ կատարեւապէս անգործ կ'զբաղէին նժոյգներով, զէնքերով եւ ճարպիկ ձիարշաւներով:

Այն ինչ ես երեւցայ, իմ վրայ դարձաւ ուշադրութիւնը: Զուանչիրցիներու հանուր համար հիւրասիրութիւնը կը համարուէր մին ամենազիւաւոր առաքինութիւններէն: Անոնցմէ իւրաքանչիւրը կ'ուզէր զիս հիւրասիրել: Մերձեցայ մի բնակարանի որոյ հանդէպ նստած էր մի պատկառելի ծերունի, Նորա զիմաց ազնիւ գծերը կ'արտայայտէին մասնաւոր հրապուրանք մը: Ողջունեցի զնա ըսելով.

—Սալամ ուն ալէ յըռւմ:

—Սլէ յըռւմ աս սալամ, պատասխանեց:

—Թող չնորհէ քեզ Ալլահը խաղաղութիւն եւ բարեբախտութիւն, պապա, ըսի, կրնա՞ն ինձ ցոյց տալ թէ ո՞րն է Հասան ցեղապետի տաղաւարը:

—Թող բազմանան քո տարիքը, ինչպէս երկնից աստղերը, պատասխանեց ծերունին. Հասանն այլ եւս մեր մէջ չէ:

—Ո՛ւր է գնացեր:

—Պարսկաստան, Քէրիմ խանի բով, որ միտքը զրած է նստիլ Նրանի գահի վրայ:

—Ի՞նչ պատճառ ունէր Հասանն հեռանալու իւր հայրենիքէն, շարունակեցի ես, ձիէն իջնելով եւ ծերունուն ըով ծալապատիկ նստելով:

—Հասանը չկարողացաւ հաշտուիլ մեր նոր տանուտէրի (պետ) հետ եւ ստիպուեցաւ հեռանալ մեր երկրէն, որովհետեւ կ'երկընչէր նորա վրէժխնդրութենէն:

—Ուրեմն դուք նոր տանուտէ՞ր ունիք:

—Ի՞նչպէս չէ. նա կը կոչուի Փանահ խան. ծնած է մեր լեռներուն մէջ. կը ճանչնայի զնա երբ դեռ պատանի էր. այդ հասակին մէջ իսկ յանդուգն էր եւ կուտարար. ոչ ոք չէր սիրեր զնա: Նա տեսնելով որ իրեն օգտակար չէ բնակիլ մեր մէջ, հեռացաւ, գնաց Պարսկաստան, այն տեղ ծառայութեան մօտ: Նատիր Դահիւն և Զաւլի (մուսնետիկ) սլաշտօն կը կատարէր: Յետոյ վերադարձաւ մեր մօտ: Շնորհիւ իւր ճարպիկութեան, խորամանկութեան, խօսելու մէջ ունեցած ճարպիկութեան զոր սովորած էր իրանցիներէն, նա կարող եղաւ գրաւել մեր սլաշտմիտ Զուանչիրցիներու խելքն, եւ այդու եղաւ նոցա տանուտէր: Հասանը միայն ընդդիմացաւ Փանահ խանի ընտրութեան, բայց երբ այս վերջինն յաջող հանդիսացաւ, Հասանն ստիպուեցաւ հեռանալ:

—Սիւսո՛ւ, շատ ախոս՛ս, պատասխանեցի ես, նա ինձ շատ հարկաւոր էր: Իմ հօրեղբոր վարանդայի իշխանէն մի յանձնարարական ունիմ նորա անուան:

—Լսէ՛, ըսաւ ծերունին, ոչ ոքի չի յայտնես թէ դու Հասանի բարեկամն ես. եթէ զայդ գիտնան, քեզ համար լաւ չիլինիր. խտակ սրտով խորհուրդ կուտամ քեզ:

Գոհունակութեամբ շնորհակալութիւն յայտնեցի ծերունուն նորա նախազգուշութեան համար: Երբ իմացաւ իմ գալուտեան նպատակն, ինձմէ խնդրեց որ իւր մօտ բնակիմ:

—Իմ որդիքս կը լինին քո ընկերներն, ըսաւ. նոքա կը համարուին ամենալաւ ձիավարներ մեր մէջ: Իմ տունը քո տունը կը լինի:

Յետոյ կանչեց իւր դաւակներն եւ զիս ներկայացուց նոցա: Այդ երիտասարդները զիս ընդունեցին իւր եղբայր Նոցա անկեղծ դէմքերն ինձ շատ հաճելի թուեցան: Երէց որդին որ կը կոչուէր Ապաուլ կարծես կը պատկանէր հսկայներու սերունդին, ամէն ինչ ի նմա հայակապ էր եւ վեհանձնական, միայն զէմբը մի քիչ խորին խստասրտութիւն կը յայտնէր: Արտաւոր որդին կը կոչ-

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Ռուսիոյ Սահմանադրական կուսակցութիւնն հրատարակած է մարտ 8|20ին մի յայտարարութիւն որով կը ծանուցանէ թէ ինքն երբեք չէ մասնակցած Կայսեր դէմ դաւաճանութեան: Յայտարարութիւնը կը թուէ մի առ մի այն ամէն դժգոհութիւններ զոր ունին արդի վարչական գրութեան դէմ:

Յայտարարութիւնը կը նշանակէ այն երբեք կէտերն որք կը կազմեն սահմանադրական հանգանակին կենսական յօդուածներն եւ որք հետեւեալներն են.

1. Գումարել խորհրդատու Ազգային ժողով մը որոյ պաշտօնը պիտի լինի հրապարակային հսկողութիւն ազգային գործոց: Չարն իրաւունք պիտի ունենայ իւր հաւանութիւնը տալ մեծամասնութեան կամ փոքրամասնութեան կարծեաց:

2. Մամուլ ազատութիւն:
3. Քաղաքական բոլոր յանցանորայք ընդհանուր ներողութիւն:

Ռուսիոյ Կայսեր կենաց դէմ դաւադրութիւնը թէպէտ յուզեց զաշխարհ համայն, բայց մասնաւորապէս մեծ տպաւորութիւն ըրաւ ի Պրանսա ուր ամէն ոք առասպէս է եւ համակիր Աղեքսանդր Գ. Կայսեր:

Եւ Ռուսիոյ համակրանքն ալ, պաշտօնական թէ ազգային, նուիրուած է Պրանսայի: Աղեքսանդր Բ. Կայսիր օրով պաշտօնական Ռուսիան Գերմանիոյ նուիրուած էր, Հանգուցեալ Կայսրն ասպետական սէր կը տածէր իւր գերման մօրեղբոր, Վիլհելմ Կայսեր, եւ Ռուսիոյ ազգային բաղաժաւանութիւն զոհուեցաւ ընտանեկան համակրանաց, ու գերմանք գրաւեցին Ռուսիոյ վարչական ամէն ծիւղերը: Բայց Աղեքսանդր Գ. յեղաշրջեց իւր հօր քաղաքականութիւնը:

Տակաւին զահաժառանգ իշխան, Աղեքսանդր Գ. ամէն սովոր կը յայտնէր թէ կը սիրէ խորապէս գերմանսն, եւ այժմ հետզհետէ այդ Փրանսասէր ոգին յերեւան կուգայ քաղաքականութեան մէջ, եւ այդ ոգին կը համապատասխանէ Ռուսիոյ ազգային գաղափար:

Ռուսք Փրանսասէր են բարձրագոյն դասէն ստորին տասն, եւ գերմանասեացք: Երբ երկու ուն գործաւորք միմեանց հետ կուսի բռնուած են եւ զիրար նախատելու համար ամէն բան այլ եւս սպառած, իբր ծայրագոյն հայեցողութիւն իրարու երես կը նետեն բերանացի արհամարհական բառեր:

Օրմը գործաւոր մը սյապիսի նախատիւք մը ըրած լինելով ուրիշ գործաւորի մը, այս վերջինս պատուոյ դատ բացաւ նորա դէմ: Դատաւորն իւր վճիռը տուաւ թէ՛ Գերմանացի լինելը նախատելի բան մը չէ, այլ դժբաղդութիւն մ'է:

Մի քանի շաբաթ առաջ երբ Պ. Կիրս տուաւ մի մեծ երեկոյթ, յորում գանուեցան Կայսրն ու Կայսրուհին, ներկայացուած ընտանեկան խաղերը ուսներէն եւ Փրանսերէն լեզուաւ էին գերմաներէն ոչինչ:

Ամէն պարագայի մէջ Պիզմարք իշխան իւր ոչեքն աւելի է բեղբրացուրկ հաւած է քան ի Բարիկ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԴՈՒՌԸ

Ամէն ինչ յարաբերական է, երկնապարգեւ անձրեւն որ տրգասաւոր կ'ընծայէ հողն, երաշտութիւն կ'ուտայ Ազգ. ժողովոյն: Անձրեւը կ'իջնէ ու կ'իջնէ. տեսարբ երեսօրսանք իրենց աչքերն յերկինս յառած ի վտար կը լրտեսեն արեգական ճառագայթ մը: Եւ քանի որ աչքերնին յերկինս է, օդուտ կը օսողեն առիթէն անիծելու Ատենապետաց Դիւանն որ նիստն այս աւուր թողուց:

Անիծելնք թէ օրհներ, պէտք է քաշել, պէտք է երթալ ի Գում-Գարու: Բայց ո՞րքան փոխած է անձրեւը խորհրդարանական բարբերք: Սիրքէ՛ճիյի կայարանը գրեթէ ամայի է. հազիւ մի քանի երեսօրսանք 11-30 (երեպական) կասախուրով կը մեկնին Միւսնեքն: Անձրեւը ցոց կուտայ թէ մեր երեսօրսանք ինչ գաղափարք երու կը բաժնուին: Թափ տեղաւոր մէն ուրեք եւ որոնեցինք: Երբ կարգի եւ երեսօրսանք:

Ա. Կիլիկիէն: Ասոնք ինչ որ ալ լինի, ժամը քանի՞ ու հարկ լինի, միշտ գործերն կը կարգադրեն, կտզմ եւ պատրաստ են: Առաւօժ, երեկոյ, ցերեկ, ո՞ր ժամուն ժողով լինի, ըստ այնմ պատրաստ են: Դոտաւանդութիւն չունին. կասախուր կը նստին կերթան: Երանի՛ իրենց:

Բ. Բաղլարեանք: Ասոնք երբեք ոչառատ չեն. մէկ ժամու մէջ տասը գործ ունին, ամենքն ալ կիսկատար կը թողուն. կասախուրին ալ չեն հասնիր եւ կ'երթան Բաբա-էյ: Ասոնք ճշմարիտ անձնուէրներ են, վառն զի Պիտոյ թրամուէ յերով մինչև Գում-Գարու երթալ յանձն կ'առնեն:

Գ. Անաստասիանք: Ասոնք համար ալ հոգ չէ թէ երբ նիստ կը լինի, օդն ինչպէս է. ասոնք կ'առքերով սլացողներն են: Բայց այսօր քիթերնին բերաննին թթուած է. կ'անիծեն Ատենապետաց Դիւանն: Այո, եթէ նիստն անցեալ շաբաթ լինէր, ամէն ոք կը տեսնէր զիրենք կողքերուն մէջ: Բայց այժմ ամէն ոք անձրեւանոցներու ներքեւ ապաստանած, ո՞վ կը մտածէ կողքերէն ներս սայելու նեղութիւնն յանձն առնուլ:

Ինչպէս որ ալ լինի ամէն ճանապարհ կ'առաջնորդէ ի Պատրիարքարան: Ժամ 8|2 է, երեսօրսանք կը տեսնունին Պատրիարքարանի անկիւններն: Որն է օրուան տիրող գոյնը: Դիւրին է գուշակել, բաւական է նայիլ բարապաններուն թէ ո՞ւմ աւելի պատիւ կ'ընծայեն:

Յարգն ու պատիւը Պուլկուրեան Ռուբէն է՞ Ֆէնտիին: Բարապանները կը վազվառտեն:

—Էֆէնտի: Պուլկուրեան էֆէնտին զբեղ կ'ուզէ: —Էֆէնտի: Պուլկուրեան էֆէնտին ասդին է: —Էֆէնտի: Պուլկուրեան էֆէնտին վերն է: Պուլկուրեան էֆէնտին, Պուլկուրեան էֆէնտին:

Բարապաններն հոտառութիւն ունին, կ'ըզան թէ ծագող արեգակը Պուլկուրեան էֆէնտին է, Դիւանի, Բաղաքական ժողովու, մահու եւ կենաց տէրը, ապագայ նախարարապետն, օրուան հերոսը Պուլկուրեան էֆէնտին:

Եւ Պուլկուրեան էֆէնտի աչ գրպանն երեսօրսանք կանոնադիր, ձախ գրպանն երեսօրսանք կանոնադիր, բանթալուն գրպանն երեսօրսանք կանոնադիր, բերանը բռնած կ'առնագիր, կ'երթ եւեկէ:

Պուլկուրեանք ժողոված են փոխանոր-

ուէր Խոմայիլ բարձրահասակ շէր նա. նորա գլխաց բոլոր գծերու մէջ կ'երեւէր կանացի բնորոշութիւն. նորա ձայնն այնքան գրաւիչ էր որ ուղղակի մարդու հոգեւոյն մէջ կը թափանցէր:

Երբունին հնարեց իմ մասին մի պատմութիւն: Ըսաւ իւր որդիներուն թէ ես մի միւսիւման եմ Խորատանի կողմերէն եկած. թէ նշանաւոր պատճառներ ստիպած են զիս թողուլ հայրենիքս. թէ սպանած եմ մի պարսիկ պաշտօնեայ որ զիս պիտի վիրաւորէր եւ թէ այդ սպանման պատճառաւ հեռացած եմ Խորատանէն, ապաստան գտնելու ազատ Ջուանշիրցիներու մօտ:

Երիտասարդներն այդ առասպել լսելով երգուեցան ինեւ իմ եղբայրներ եւ խնդրեցին որ ես համարեմ իբր իմ սեփականութիւն նոցա կայքն ու բնակարան:

—Բայց դուք, գաւառներս, չպիտի դարձանաք, շարունակեց խելացի ծերունին, երբ տեսնէք որ մեր հիւրը մեզ հետ չկատարեր այն սուրբ պաշտամունքներ որք սահմանուած են մեզ համար երկնային գրքով: Որպէս պատիժ իր գործած յանցանքի, նա շարունակ հինգ տարի չէ կարող գնալ Քուբը նամազ ընելու եւ կատարելու մեր կրօնական միւս ծէսերն: Այդ արգելումներ դրուած են նորա, որպէս մի պատիժ, մի սուրբ շէյիէ, ում խոստովանած է նա իւր մարդասպանութիւնը:

Հասկցայ ծերունեոյն նախատակն եւ սըրտէս շնորհակալ եղայ նմա:

Երբ հեռացան նոքա՝ ձիւ տեղաւորելու եւ ճարակ տալու համար, ծերունին ինձ հետ միտնակ մնալով ըսաւ.

—Դու մի՛ զարմանար այդ նախապգոյնութիւններու համար զոր ի գործ կը դնեմ: Այժմ շատ փոխուած են ժամանակներն: Իրանցիներու հետ մեր յարաբերութիւնները խանգարեցին մեր բարքեր: Ընտանեցանք Պարսից բոլոր մոլեռանդութեանց եւ ցնորաբանութեանց: Առաջ մի եւ նոյն էր մեզ համար ինչ կրօնքի ալ որ պատկանէր մի մարդ, երբ նա մեզ հիւր էր: Իսկ այժմ մի քրիստոնեայ հիւր պահելը սարսափելի արատ կը համարուի: Մոլեռանդութիւնն այնքան արմատացած է մեր մէջ՝ որ ես եւ ոչ իսկ հարազատ որդիներուս կրնամ հաւատալ: Այդ պատճառաւ հնարեցի այդ պատմութիւն: Այսուհետեւ զբեղ պիտի կոչեմ Մահմէտ: Եւ որպէս զի ստիպուած չլինիս կատարել մեր ծէսերն, հնարեցի չէյիսի պատմութիւնն:

Այն, Ջուանդ, շարունակեց ծերունին, ճշմարիտն ըսելով, շատ ցաւալի է միտածել թէ ի՞նչ ժամանակներու հասած ենք, որ ես ստիպուած եմ խաբել, սուտ խօսիլ մինչեւ անգամ զաւակներուս առաջ: Ո՞ր կորուստ մեր նախնեաց պարզութիւնը, մեր սրտերու ուրախութիւնը: Մինչեւ իսկ մեր կանանց սովորութիւններն անդամ փոխել կուտայ Փոնահ խան. իւր կիներն սկսած են իրենց երեսները ծածկել անթափանցիկ ցանցատեսակ քօղով: —Այդ շատ վատ է, շատ վատ:

Եւ ծերունին կ'ըսէր այդ ամէնը վախճալով մի գուցէ լսէին իւր գառողութիւններն:

Արեգակը մայրը մտաւ. առաջ կարգաց Փէշմապը, հրաւիրելով աղօթելու: Երբունին զիս թողնելով զիմեց դէպ ի մի տաղաւար որ կը ծառայէր Քուբի տեղը: Ամէն կողմէն անդ կը թափուէր ժողովուրդն աղօթելու համար: Եւ միայնակ մնացի, նստած թաղիքի վրայ, որ կը տարածուէր ծերունեոյն խրճիթին առաջ: Սրտի սեղմումը կը նայէի վերջապետին որ ոսկի գոյնով կը ներկէր երկինքը:

դարանը — խեղճ փոխանորդին սիրտը կը արտփէ ինքն աշխտանական անձ եւ ընդդէմադիրք իրեն հիւր լինին : — Բայց ինչ ընել այդ կարմիրաւոյտ երեսփոխանը փետր. 9-էն ի վեր տեղ մը կ'որոնեն գումարուելու բայց չեն գտնելու : Ի՞նչ ըսել «սպառնալից» որք Գոն և այլն, բայց արմատականաց ո՛չ գոյ տեղի ուր գնիցեն զ... իւրեանց :»

Արմատականը որքան ալ վերջապէս Գոն լինին ուր ուրեմն նստատեղի մը գտած լինելուն համար բայց և այնպէս իբր աշխարհի մարդ կ'ընտանեն թէ՛ որպիսի՝ փափակ վիճակի մը կ'ենթարկեն փոխանորդ Հայր սուրբը, հետեւաբար կարճ կը կապեն, նորին սրբութեան աջը կը համբուրեն, Գոն մաքսեան սրբազանի օրհնութիւնը կ'առնուն և կը սլանան Պատրիարքարանի սենեակները :

Միջին սրահն — Բնայան — գտարկ է : Տէ-ճգրաւէ կը խառնեն — արդէն իրենց սեփ հականութիւն համարելով — Պատրիարքական խցիկը, բայց ամէնքն ահաբեկ ետ ետ կը զիմեն : Պատրիարքին ձայնը կը լսուի : Պատրիարքին վեղարը Երուսաղեմաւունն է, բայց ինքը պատրիարքարանն է :

Եւ պատրիարքին շուրջն են Նուրեան է-Փէնտի, Մէրէմ-Գուլի էֆէնտի — ետեւէն ո՛վ կուգան կրնաք երեւակայել Փափագեան էֆէնտի : անդ են Հալաճեան էֆէնտի, Թորոսեան էֆէնտի : Գրան առաջն է Գուրգէն էֆէնտի մէջ մը ոտքը սեմին ներս կը դնէ մէջ մը դուրս կը հանէ :

Պաւլուրեանը դեւ գոյ ըսելով կը փախչին և կը գումարին Ուսումնական խորճը-գոյ սենեակն ուր մերթ ընդ մերթ իրենց այցելութեան կուգայ Ատենապետաց Դիւանի Ա. Սենեկապետը, Պարտիզակցի Ա. հան վարդապետ :

Ժողովականաց ծրագիրը ծանրաբեռնեալ է : ո՛րն ընել, ո՛ւստից սկիւլ : Նախ Դիւանը տապալելու է թէ Բաղ. Ժողովը : Պատրիարքին հրաժարականն ընդունելու է՝ թէ Երուսաղեմայ կանոնադիրը ջախջախելու է : Բայց բաւական չէ մտքերին դընել, ժողով պիտի գումարի՝ թէ ոչ ժողովոյ բարուգրան ստորագրութեանց տեսարն ի ձեռին կը հրաւիրէ երեսփոխաններն որ ստորագրեն. թիւ ու գոյն գիտնալու : Ի՞նչ եւ է բոան երեսփոխանը, քիչ մ'ալ բաշենք քսան եւ ութը : Կառքերու ձայներ կը լսուին, եկան նորեկներ, բայց հազիւ քսան եւ հինգ ստորագրութիւն :

Այս միջոցին ժողովատեղին կը մանէ Ազգ. Ժողովոյ ատենապետ Մէրէմ-Գուլի էֆէնտի մէկ ձեռքը մի քանի նամակներ բռնած, միւս ձեռքը Ազգ. Ժողովոյ Բ. ատենապետ Տօթթ. Թիրեաքեանի ըլանցէն, նորա ժողովրդական ճառագայթներու փայլէն մի քիչ պայծառանալու համար :

Բացակայ է, հիւանդ է Եռսուֆեան Տիգրան էֆէնտի : Ըսել կը տարածուի : այդ կը բաւէ որպէս զի ամէնքն համոզուին թէ նոյն օր Ազգ. Ժողովոյ գումարում անհնարին է :

Բայց եւ այնպէս մեծ ջանք մը ընելու է : զանգաղը կը հնչուի, երեսփոխանը կը հաւաքուին մեծ սրահ : Պատրիարքական սենեակէն դուրս կ'ենէ Փափագեան էֆէնտի, մի քանի բարեկամաց ձեռք կ'երկնցնէ եւ կը շնորհէ Shake-handներ : Ի՞նչ ընեն խեղճերը, մեղաւոր են :

Թափօրը կը կազմուի եւ առաջնորդութեամբ պետին ժողովականը կը մտնեն Ս. Խաչ, ուր արդէն խաչաւորքը լեցուած է : այսօր միայն վտիտ, տոգոյն, երիտասարդ դէմքեր կան, ամենքը բարկացայտ : Բայց

ո՛ւր են այն օրերն երբ ամբողջ հայութիւնը կը շարժէր Ներսէսի հրաժարականին համար :

Մութ, խոնաւ եկեղեցին զողովաւորով կը նստին երեսփոխանը : Դիւանը միայն ատենապետով կը ներկայանայ : ո՛չ ոգեւորութիւն, ո՛չ արթութիւն, միայն ձանձրոյթ եւ անհամբերութիւն :

Ատենապետին երեսը միայն ուրախ է, ժողով չպիտի գումարի : Այսօր վտանգաւոր երեսփոխանաց գէմքերը կը տեսնուին, բարեկամ չկայ, ուրեմն կարելի է յիշել թէ՛ Ազգ. Ժողովը կանոնադիր ունի, թէ՛ 36 ձայներ հարկաւոր են այսօր եւ թէ՛ 50 ներկայը այս անգամ չեն կրնար 36 ձայն արտադրել — ինչ որ ուրիշ ատեն կարելի կրնայ համարուի :

Ճար չկայ, հակառակ Մէլիքեան էֆէնտի եւանդեան պէտք է ժողովը փակել, բայց պէտք է որոշել գումարման օրն : Ո՞ր օր, պատասխանն ամէն բերաններու վրայ կը թռչի, գալ ուրբաթ :

Բայց եթէ զայ ուրբաթ եւս անձրեւէ ինչպէս որ հաւանական է : Տարրական խոհեմութիւնը կը պահանջէր դարձաւոր մտածել նախապէս : զէթ այն խեղճ երեսփոխաններն որք ինչ որ ալ լինի պիտի գան չոգնին պարագայ տեղը, իմ առաջարկը պարզ էր և հարկ է՝ ըսել թէ չընդունուեցաւ փասն զի գործնական էր : Հազիւ կըրցայ երկու երեք բառ արտասանել և ժո-

ղովականը կը դիմէին իրենց կօշիկներու եւ անձրեւանոցներու :

Բայց ինչ եւ է, ինչ որ չկրցինք ժողովոյ մէջ կրնանք այստեղ ըսել : Ազգ. Ժողովոյ հրաւիրագրերն պէտք է որ պայմանաւոր լինին : եւ դրուին այնպէս ինչպէս Լօյտի շոգենաւներու աղգերն :

«Ազգ. Ժողովը պիտի գումարի յառաջիկայ ուրբաթ (tempo permettendo)» եթէ Զեքալաֆ լինի 15 սանդիկրատ

Մահալաֆ 770 :

Նշիւալաֆ 0 :

Հազալաֆ Բարեկառն (այսինքն եթէ քիչ մը հիւսիս քիչ մը հաւաքուի)

Ո՞ր ուրեմն ցրուեցանք, բայց զիրար գտանք կայարանը : Ութ երեսփոխանք մի փակօնի մէջ էինք : Պաւլուրեան էֆէնտի ա. մէնուս Երուսաղեմի կանոնադիր բաժնեց : Երբ հասանք Լաւաթիա, մեր դէմն ելնող հետաքրքիրը կը հարցնէին :

— Ի՞նչ բրիք :

— «Ման եկու, ման եկու, ձեռքդ դառարկ առն եկու» կը պատասխանէինք :

20 Մարտ :

(*) Եթէ օգը ներէ :

Արտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՎԵԼԻ ԻՐԱԳՐՈՒ



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՆԴԵՐՎՈՒՆԵՐԻ ՄԼՏ. ՆՈՐՈՂՈՂԸ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճու գեղ կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը : Գլխու թեփը շուտ մը աներևութ կ'ընէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի :

«Մէկ շիշը կը բաւէ» : Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքադուած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :

Կերկ չէ, և ամենեւին զեան մը ընեն : Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր «ՄԼՏ. Մ. Ա. ԱԼԼԵՆԻՆ» համաշխարհային խաչապատկէն : (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիդ ու Կիւտ Եօրք : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղազործներու և անգլիացի դեղագործներու քով :



ՀԵՐՄԵՆԵԿԵՆ ՆՈՐՈՂՈՂԸ

ԳԵՂԵՑԿԱՅՈՒՆՈՂ ՄԼՏՄԱՅՑ ԳՈՅՆԸ ՍԻՐՏ ՆՈՐՈՂՈՂԸ

Երգամուսն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիս թեփը և բազմաթիւ փոշիներէ : Եւ այն անգամ դո՛ւ ծածկը քիչ ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խելոյն որ երեսը, վիզը, թնկերը և ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարոնի փայլ : Հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ : Ստացնի գրգռել յաւկաթիւնները կը հանդարտեցունէ : Եւ հետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի և ձեռքի ցանկերը, արեւոյշրուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բաւարարութիւն : Եւ առ ամեն բանով անկարելի կ'ընէ մասնութի թէ արհեստով գեղեցկացուած է :

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիդ ու Կիւտ Եօրք : Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղազործներու և անգլիացի դեղագործներու քով :



ԿԵՆՆԻՑ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒՆ

ՄԼՏԼՐՈՂ

ՄԼՏԵՐՈՒ ՄԼՏ ԼԵՏԻԿ ՆՈՐՈՂՈՂԸ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը : Կը դարբեցունէ անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճում, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ :

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիդ ու Կիւտ Եօրք :

Կը գտնուի. Ն և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղարանը, բերա, Մեծ փողոց : Խոմընտ Գարուանա, Անգլիական միջերանոց, Երեսէք Գալուրըմ. և Իգիտօր Լազանտէլա 433, բերա Մեծ փողոց :